

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԿԸ 1840-ԱԿԱՆ—1914 թթ.
(ՎԱՐՉԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Գ. ԲԱԴԱԼՅԱՆ

XVI—XVII դդ. թուրք-պարսկական երկարատև պատերազմների հետևանքով Հայաստանը բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև: Վերջինս 1555 թ. Ամասիայի և 1639 թ. Կասր-է-Շիրինի պայմանագրերով զավթեց երկրի մեծագույն մասը, որը պատմագրության մեջ հայտնի է Արևմտյան Հայաստան անունով: Վարչականորեն այն բաժանվեց նահանգների՝ (թուրք.՝ «էյալեթ», 1864 թվականից՝ «վիլայեթ»): Նահանգը բաղկացած էր գավառներից (թուրք.՝ «լիվա» կամ «սանջակ»), որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին գավառակների (թուրք.՝ «կազա»), վերջիններս՝ գյուղախմբերի կամ համայնքների (թուրք.՝ «նահիե»):

Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծված նահանգներից էր Վանը՝ կազմավորված 1548 թ.²: Սակայն վերջնական կազմավորման թվականը պետք է ընդունել 1555-ը, երբ Ամասիայի պայմանագրով հաստատվեց նրա արևելյան սահմանը (Վասպուրական—Զագրոսյան լեռնաշղթայով), որը կրկին վավերացվեց 1639 թ.: XVII դ. Վանի նահանգն արևելքից սահմանակից էր Թավրիզի (Ադրբեջանի), իսկ հյուսիսից՝ Զուլսուր-Սա՛ադի (Երևանի) բեկլարբեկություններին (վիլայեթներին, Պարսկաստանի կազմում): Հյուսիսից նրան սահմանակցում էին նաև Կարսի և էրզրումի (Կարնո), արևմուտքից ու հարավ-արևմուտքից՝ Դիարբեքի (Ամիդի կամ Կարա-Ամիդի), իսկ հարավից՝ Մոսուլի նահանգները (էյալեթները)³: Նման սահմաններում Վանի նահանգի մեջ էին մտնում Վասպուրականի, Տուրուբերանի, Կորճաքի մեծագույն մասը, Մոկքն ամբողջությամբ, ինչպես նաև Այրարատի հարավ-արևելյան հատվածը՝ Բագրևանդ (Ալաշկերտ, Կարաքիլիսե, Խամուր), Մաղկոտն ('Իհադին), Կոզովիտ (Բայազետ) գավառներով: Վերջիններս XVII դ. երբեմն հիշվում են նաև էրզրումի կազմում, որին էլ տրվեցին հաջորդ հարյուրամյակում: Դրանով Վանի նահանգի հյուսիսային սահմանը սկսեցին կազմել Մաղկանց (Ալազաղ) լեռները: Իսկ ընդհանուր առմամբ նահանգի վարչական կառուցվածքը գրեթե անփոփոխ պահպանվեց XVII դարից մինչև XIX դ. 1-ին կեսը: Վանի նահանգի վարչական բաժանումը, հարևան Դիարբեքիի նման, ուներ մի հետաքրքիր առանձնահատկություն: Այստեղ մինչև 1840-ական թթ. վերջը գոյություն ունեին քրդական կիսանկախ իշխանություններ (հյուսիս-մեթներ): Դրանք էին՝ 1) ոռժակիների Բիթլիսի (Բաղեշի) խանությունը՝ հարավ-արևելյան մասում, 2) Հաքյարիի կամ Զուլամերկի խանությունը՝ մեծ Զաբ գետի վերին և միջին հոսանքի շրջանում: XVII—XVIII դդ. նրան էին ենթարկվում նաև Շատախը, Մոկսը, Ոստանը, 3) Մահմուդիի (Մահմուդիեի)

¹ Նախապատվությունը տվել ենք վարչամիավորների հայկական անվանաձևերին:

² BOP, S 175:

³ PHG, map XXXII:

կամ հոշարի իշխանութունը՝ Ծաղկանց (Ալաղաղ) լեռներից մինչև Հայոց-ձոր (հոշաթ) գետի վերին հոսանքի շրջանը, պարսկա-օսմանյան սահմանի երկայնքով, 4) Փինյանիշը, Հաքյարիից հարավ՝ նեխիլ գետի հովտում: XVIII դ. Փինյանիշն այլևս չի հիշատակվում, հավանաբար այն պատճառով, որ ենթարկվել էր իր ավելի հզոր հարևանին⁴:

1840-ական թթ. սկզբին նահանգի սահմանները լուրջ փոփոխություններ չկրեցին, եթե չհաշվենք, որ միառժամանակ Բայազետը կրկին անցավ Վանին: Սակայն էական տեղաշարժեր կատարվեցին վարչական ներքին կառուցվածքում: Նախ, խիստ նվազեցվեց գավառների թիվը: Նախկին գավառները միավորվեցին ավելի ընդարձակ վարչամիավորների մեջ, վերածվելով գավառակների, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ գյուղախմբերի: Ըստ 1846—1847 թթ. (Հիշրայի 1263) թուրքական տարեգրքի (սալնամեի), Վանի նահանգը բաղկացած էր 3 գավառներից (1831 թ. 16-ի փոխարեն)⁵՝ Վան (Հաքյարիի հետ), Մուշ և Բայազետ⁶: 1847—1848 թթ. (Հ. 1264) Բայազետը վերջնականապես հանվեց Վանի կազմից, իսկ Հաքյարին վերածվեց առանձին գավառի: Ընդ որում, նահանգի սահմանները հիմնականում համընկնում էին 1831 թ. սահմաններին: Կային նաև նոր շրջաններ. Ամադիեն (Ամադիյան)⁷՝ հարավում և Մանազկերտը, հնուան ու Վարդոն՝ հյուսիս-արևմուտքում⁸: 1840-ական թթ. կեսերից տեղի ունեցավ երկրորդ նշանակալից տեղաշարժը: Սուլթանական կառավարությունն աստիճանաբար իրեն ենթարկեց քրդական իշխանությունները, որոնք վերածվեցին սովորական վարչամիավորների: Դրան հետևեցին նոր վերափոխումներ: 1848 թ. ստեղծվեց Դիարբեքիի կամ Քրդստանի նահանգը, իսկ նախկին Վանի տարածքը բաժանվելով 2 գավառի՝ Վան (Հաքյարիի հետ) և Մուշ, մտավ նրա կազմի մեջ⁹: 1849 թ. առանձնացվեց և ինքնուրույն գավառի վերածվեց Հաքյարին: Այսպիսով, նախկին Վանի տարածքում առաջացան 3 գավառներ՝ Վանը, Մուշը և Հաքյարին: Ընդ որում, նախկին Բիթլիսի խանությունը մտնում էր Մուշի, իսկ Մահմուդին և Հաքյարին՝ Հաքյարիի մեջ⁸: Նման հսկա նահանգի ստեղծումը, անշուշտ, ուներ որոշակի քաղաքական նպատակներ: Դրանով փորձ էր արվում ջլատելու ոչ միայն քրդական, այլև տեղ-տեղ դեռ պահպանված հայկական կիսանկախ իշխանությունների ռազմական ուժերը: Բացի այդ, բուն հայկական երկրամասերը մտցվում էին պատմական որևէ հիմքից զուրկ «Քրդստան» անունը կրող նահանգի մեջ:

1850 թ. Դիարբեքիի (Քրդստանի) ողջ արևելյան և մասամբ՝ հարավ-արևելյան ու հարավային շրջաններից կազմվեց նոր վարչամիավոր՝ Հաքյարիի նահանգը, որի կենտրոնը Զուլամերկն էր⁹: Համաձայն 1851—1852 թթ. (Հ. 1268) տարեգրքի, նորաստեղծ նահանգի գավառներն էին Հաքյարին (Զուլամերկը), Վանը, Մարդինը և Զեզիրեն: Մուշը շարունակում էր մնալ Դիարբեքիի կազմում¹⁰: Վերջինիս էին անցել նաև ժամանակին Վանի կազմում գտնվող Սպարկերտը, Կեցանը և Մամոտանքի փոքրիկ շրջանը¹¹: Հաքյարիի

⁴ Վանի նահանգի XVI դ.—XIX դ. 30-ական թթ. վարչական բաժանման մասին տե՛ս ԹԱ 2, էջ 30—41, 220—221: ԹԱ 3, էջ 26, 30, 32, 243—246: ШХБ: ԻնՆ, էջ 134, 137: БОІ, s. 626: УО4, էջ 298: ТОИ, стр. 97: БОР, S. 175—183: Ավելի մանրամասն մատենագիտությունը տե՛ս ԱԱՇ, էջ 14—15:

⁵ БОР, S. 175:

⁶ XCH, стр. 281—283:

⁷ SDO 1265 (1848—1849), s. 82:

⁸ SDO 1266 (1849—1850), s. 83:

⁹ БОР, S. 177:

¹⁰ SDO 1268 (1851—1852), s. 72—73:

¹¹ ԱՎ 12, էջ 330:

նահանգը գոյատևեց մինչև 1855 թ. (Ն. 1272): Այդ թվին վերստեղծվեց նախկին Վանի նահանգը, իսկ Հաքյարին կրկին դարձավ վերջինիս գավառը: Նահանգին միացվեց նաև Մոսուլի ընդարձակ գավառը (մինչև 1866 թ.)¹²: Մարդինը և Զեզլիբեն տրվեցին Դիարբեքիրի նահանգին, իսկ Մուշը բավական երկար ժամանակով մտավ էրզրումի կազմի մեջ¹³: Փաստորեն, արդեն այս շրջանից էլ նկատվում է 2 հայաշատ գավառները՝ Վանը և Մուշը, միմյանցից զատելու թուրքական կառավարության ձգտումը: 1864 թ. նահանգի կենտրոնը տեղափոխվեց Զուլամերկ և այն վերանվանվեց Հաքյարի, սակայն դա տևեց ընդամենը 1 տարի¹⁴: 1865—1866 թթ. (Ն. 1282) Հաքյարին դարձյալ Վանի նահանգի գավառն էր: Վերջինիս վարչական բաժանումը հետևյալն էր¹⁵.

I Վանի գավառ: Գավառակները՝ Վան (Բերկրի գյուղախմբով), Արճեշ, Արծկե (Ադիլչևազ), Խլաթ (Նյուսիսային մասը, այսպես կոչված Վան-Ախլաթը), Գյավաշ (Կարկառ, Կարճկան և Դատվան կամ Գավառ գ-խմբերի հետ), Մոկս, Շատախ (Ոստան և Հայոց-ձոր գ-խմբերով), Մահմուդի (Նոշար), Աղաքիս, Շիրվան (Շիրվի), Նորդուզ:

II Հաֆյարիի գավառ: Գավառակները՝ Զուլամերկ (Հաքյարի), Աղբակ, Բեյթ-ուլ-Շաբաբ, Չալ, Կոթուր, Դերի, Թիար (Թիարի, Վերին և Ներքին), Գավառ (Գյավառ), Շամդինան:

III Մոսուլի գավառ¹⁶:

1864 թվականից Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող վարչական փոփոխությունների հետևանքով ստեղծված նոր նահանգները հիմնականում «համապատասխանում» էին հպատակ ժողովուրդների էթնիկական կամ նախկին պետական սահմաններին: Արևմտյան Հայաստանի մեծ մասը՝ էրզրում (Կարին), Բաբերդ, Օլթի, Կարս, Բայազետ, Մուշ, Բիթլիս (Բաղեշ) և Երզնկա կենտրոններով, միավորված էր ընդհանուր նահանգի՝ էրզրումի մեջ, որը սկսեց կոչվել նաև «էրմենիստան»: 1866 թ. որպես գավառ, վերջինիս մեջ մտավ նախկին Վանի նահանգի մեծագույն մասը (առանց Մոսուլի): Հաքյարին որպես վարչամիավոր վերացվեց՝ դառնալով Վանի գավառամասը: Վանն էրզրումի («էրմենիստանի») կազմում մնաց մինչև 1876 թ. ներառյալ: Չնայած թուրքական աղբյուրների մեծ մասում տիրող խառնաշփոթին, որի հետևանքով տվյալները խիստ աղավաղված են, դրանց համեմատումը միմյանց, ինչպես նաև առավել հստակ և ճշգրիտ տեղեկություններ պարունակող տարեգրքերի (համակայսերական 1868—1869 թթ. և էրզրումի 1871—1872 թթ.) հետ թույլ են տալիս եզրակացնելու, որ 1866—1876 թթ. Վանի գավառը հիմնականում լուրջ փոփոխություններ չի կրել: Դա են ցույց տալիս նաև Յա. Մալամայի և Ալ. Երիցյանի աշխատությունների տվյալները, որոնք քաղված են անմիջապես թուրքական 1874 և 1876 թթ. տարեգրքերից: Այսպիսով, էրզրումի («էրմենիստանի») նահանգի Վանի գավառը 1866—1876 թթ. հետևյալ վարչական կառուցվածքն ուներ¹⁷:

¹² BOP, S. 203:

¹³ Նույն տեղում, S. 177, 179, 182:

¹⁴ Ն. տ., S. 177:

¹⁵ SDO 1282 (1865—1866), s. 171—172:

¹⁶ Որոշակի դժվարությունների հետ կապված, Մոսուլի մանրամասն վարչական բաժանումը շեք տալիս: Նշենք միայն, որ նրա մեջ էին մտնում բուն Մոսուլի, Շեյխանի, Դեհուկի, Ամադիի, Ակրայի և Զիբարի շրջանները՝ իրենց բազմաթիվ քրդական ու արաբական ցեղերով: Ուշագրավ է այն փաստը, որ շատ հաճախ որևէ ցեղի բնակության շրջանը դիտվում էր որպես առանձին վարչամիավոր՝ գյուղախումբ կամ գավառակ, և կոչվում նրա անունով (Հայդարանցի, Լվեցի, Շավեցի են):

¹⁷ SDO 1285 (1868—1869), s. 185—186, SDO 1288 (1871—1872), s. 58—63, 142: МЭВ, стр. 5, 22/23—24/25; ЕТА, стр. 35—38, 44—45: Տե՛ս նաև՝ SDO 1283 (1866—

I Վանի գավառակ: Գ-խմբերը՝ Արաղա, Շավեցի (քրդական ցեղ), Հա-յոց ձոր:

II Արճնշի գավառակ: Գ-խմբերը՝ Բերկրի, Հայդարանցի (քրդ. ցեղ), Լվեցի (քրդ. ցեղ):

III Արծկեի (Ադիլջեազի) գավառակ:

IV Գյավաշի գավառակ: Գ-խմբերը՝ Կարճկան, Ոստան:

V Մոկսի գավառակ:

VI Շատախի գավառակ: Գ-խումբը՝ Նորդուզ¹⁸:

VII Մահմուդիի գավառակ: Գ-խմբերը՝ Խոշաբ, Թակուրի (քրդ. ցեղ), Մուկուրի (քրդ. ցեղ), Միլան (քրդ. ցեղ), Շամսուրի (քրդ. ցեղ), Եղդի (քրդ. ցեղ):

VIII Ադրակի գավառակ: Գ-խմբերը՝ Կոթուր¹⁹, Հարթուշի կամ Արթուշի (քրդ. ցեղ), Շկակ (քրդ. ցեղ):

IX Ջուլամեբկի գավառակ: Գ-խմբերը՝ Բեյթ-ուլ-Շաբաբ կամ Զըռնախ-մադեն, Զալ, Բեյթ-ուլ-Շաբաբի Հարթուշի (քրդ. ցեղ):

X Կավառի (Գյավառի) գավառակ: Գ-խմբերը՝ Խումարո (քրդ. ցեղ), Օրա-մար (քրդ. ցեղ), Շամդինան, Զիլու, Գյարդի (քրդ. ցեղ)²⁰:

1877 թ. ամբողջ Վանի գավառն առանձնացվեց էրզրումից՝ կրկին վերա-կանգնվելով որպես նահանգ²¹: Հաջորդ տարի նրա կազմի մեջ մտավ Մուշը, և վերստեղծվեց Հաքյարիի գավառը²²: Ընդհանուր առմամբ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և նրան հաջորդած 2—3 տարիների ընթաց-քում (մինչև 1880 թ.) Վանի նահանգի վարչական բաժանումը գրեթե փոփո-խությունների չենթարկվեց: Բացառություն է կազմում 1878 թ. Բուլինի վե-հաժողովի որոշմամբ Կոթուրի հանձնումը Պարսկաստանին, թեև թուրքական տարեգրքերում Վանի նահանգի կազմում այն հիշվում է մինչև 1880-ական թթ. կեսերը: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ նորաստեղծ նահանգի գավառ-ները՝ Վանը, Մուշը, Հաքյարին, պահպանել էին իրենց հին վարչական բա-ժանումը²³: Այստեղ հարկ է նշել, որ դեռ XIX դ. 30—40-ական թթ. Վանի նահանգի գավառներ համարվող Շիրվանը, Սպարկերտը և Խիզանը 1877 թ. վերջնականապես հանվեցին նրա կազմից, տրվելով սկզբում՝ Դիարբեքիրին, իսկ 1880 թ.՝ նորաստեղծ Բիթլիսի նահանգին²⁴: Վերջինիս անցավ նաև Մուշի ընդարձակ գավառը: Բացի այդ, նույն թվականին նահանգի վերածվեց Հաք-յարին: Նրա մեջ մտավ նախկին Վանի ամբողջ հարավային մասը²⁵: Այս-պիսով, Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին նոր վարչամիավորներ: 1881

1867), s. 170, SDO 1284 (1867—1868), s. 181, SDO 1287 (1870—1871), s. 221, SDO 1288 (1871—1872), s. 248—249, SDO 1289 (1872—1873), s. 252, SDO 1290 (1873—1874), s. 251, SDO 1291 (1874—1875), s. 252—253, SDO 1292 (1875), s. 251, SDO 1293 (1876), s. 250:

¹⁸ Նորդուզը Մալամալի և Երիցյանի կողմից սխալմամբ նույնացվել է Ոստանի հետ, ըստ Լրևույթին, բուն աղբյուրում եղած շփոթի պատճառով:

¹⁹ 1874 թվականից Կոթուրն անցավ Մահմուդիին:

²⁰ Մալաման հիշատակում է նաև հետևյալ գյուղախմբերը՝ Լիվին կամ Լեին, (Զուլամեբ-կում) և Բաժերգյաճ (Գավառում): Այդ մասին տե՛ս ИКО 2—П, стр. 173: МЭВ, стр. 5:

²¹ SDO 1294 (1877), s. 482, 502, էջ 8:

²² SDO 1295 (1878), s. 384—386, SDO 1296 (1878—1879), s. 174—175:

²³ SDO 1297 (1879—1880), s. 237—238, ИКО 6—П, стр. 25: Մշո գավառի մասին տե՛ս նաև ԼՄԱ, էջ 165—167:

²⁴ Բիթլիսի նահանգը նշված է արդեն 1879—1880 թթ. տարեգրքում (s. 237), սակայն լիովին կազմավորվեց միայն 1880—1881 թթ.:

²⁵ SDO 1298 (1880—1881), s. 67: Նշված է, որ Հաքյարիի «ենթակալության շրջանները կազմավորման ընթացքում են» (ملحقاتی در دست تشکیلات) 1881/1882—1883/1884 թթ. տարեգրքերում Հաքյարիի վարչամիավորները սխալմամբ նշված են նաև Վանի նահանգում:

թ. Մուշը թեև կրկին տրվեց Վանի նահանգին, սակայն դա ժամանակավոր բնույթ էր կրում, և 1884 թ. սկզբին այն վերջնականապես անցավ Բիթլիսին²⁶: 1880—1884 թթ. թուրքական տարեգրքերի հաղորդած տվյալներից պարզվում է, որ այդ շրջանում Վանի նահանգը հետևյալ վարչական բաժանումն ունեւր²⁷:

I Վանի գավառ: Գավառակները՝ Վան, Արճեշ, Արծկե, Բերկրի, Մահմուդի, Գյավաշ, Շատախ, Մոկս, Կարճկան: Պահպանվել էին նաև նախկին գյուղախմբերը (տե՛ս 1866—1876 թթ. վարչական կառուցվածքին նվիրված բաժինը)²⁸:

II Մուշի գավառ: Գավառակները՝ Մուշ (Խանդրես կամ Խանդրիս, Քոսուր, Սասուն և Բոնաշեն²⁹ գ-խմբերով), Խլաթ (գ-խումբը՝ Չուխուր), Մոտկան³⁰ (գ-խումբը՝ Խուլթ), Բուլանըխ, Վարդո (գ-խումբը՝ Անեբ), Մանազկերտ:

1884—1888 թթ. Վանի նահանգը որոշ փոփոխություններ կրեց: Նախ, ինչպես արդեն նշել ենք, 1884 թ. Մուշը միացվեց Բիթլիսին: Ավելի վաղ (1883 թ.) Բիթլիսին էր տրվել նաև Կարճկանը³¹, որի կազմում այն մնաց մինչև 1888 թ.: Կարճկանի հետ Բիթլիսին անցան նաև Կեցանը և Ներքին Կարկառը, որոնք շուտով միավորվելով Սպարկերտի հետ, կազմեցին առանձին գավառակ՝ Աղաթիսը³²: Այնուհետև, 1884 թ. Մահմուդին՝ Խոշաբի հետ, տրվեց Հաքյարիին, որով Վանի նահանգի գավառակների թիվը դարձավ 7: Ինչ վերաբերում է Հաքյարիի նահանգին, ապա նրա ներքին կառուցվածքը 1880—1888 թթ. բավական քիչ փոփոխություններ կրեց: Միայն 1881 թ. նրա կազմի մեջ մտավ Ամադիեն, իսկ 1884 թ., ինչպես վերը նշվեց, Մահմուդին: Անդհանուր առմամբ նահանգի վարչական բաժանումն այդ թվականներին հետևյալ տեսքն ունեւր³³.

I Ջուլամեռլի գավառ: Գավառակները՝ Ջուլամերկ, Բեյթ-ուլ-Շաբաբ (գ-խմբերը՝ Գուլիան, Սընդի և Գուլի կամ Գուլիան, բուլոբն էլ քրդ. ցեղեր), Թիար (գ-խումբը՝ Թիսում), Չալ, Ամադիե (գ-խմբերը՝ Վերին և Ներքին Բարվարի³⁴, Շիրվան կամ Շիրվե, Ռըկան, Դատուդիե):

II Գավառի (Գյավառի) գավառ: Գավառակները՝ Գավառ կամ Գյավառ (գ-խումբը՝ Օրամար, քրդ. ցեղ), Շամդինան (գ-խմբերը՝ Գյարդի և Հարքի, Խումարո, քրդ. ցեղեր), Օրամար-Դուսքի (քրդ. ցեղ), Ջիլու (Վերին և Ներքին):

III Աղբակի գավառ: Գավառակները՝ Աղբակ, Նորդուզ, Շքյաֆթի-Շկակ

²⁶ BOP, s. 179, 184: 1883—1884 թթ. (Հ. 1301) տարեգրքում Մուշը նշված է Բիթլիսի կազմում, որն այնքան էլ ճիշտ չէ: 1883 թ. այն դեռ Վանի նահանգի գավառն էր (ՄՆՈՒ 1, էջ 41):

²⁷ SDO 1298 (1880—1881), s. 88, SDO 1299 (1881—1882), s. 64, 79, SDO 1300 (1882—1883), s. 313—314, SDO 1301 (1883—1884), s. 42, 57:

²⁸ 1882—1883 թթ. տարեգրքում Վանի գավառի գյուղախմբերի շարքում նշված է նաև Վան քաղաքի արվարձան Այգեստանը (թուրք. ایغجه‌سولر):

²⁹ Բոնաշենի անունն աղավաղվելով դարձել էր بوزباش: Անհրաժեշտ է ճիշտ տեղադրել կետերը և ուղղել վերջին տառակապակցությունը, որից հետո կստացվի بوزباشین:

³⁰ Խլաթն ու Մոտկանը 1882 թ. անցան Բիթլիսի նահանգին, իսկ նրանց գյուղախմբերը՝ Չուխուրն ու Խուլթը, մտան Մուշի գավառակի մեջ:

³¹ Ար. 1883, էջ 218:

³² ГСТ, лист № 6: «Битлисский вилает»:

³³ SDO 1302 (1884—1885), s. 55—56, SDO 1303 (1885—1886), s. 55—56, SDO 1304 (1886—1887), s. 57—58, SDO 1305 (1887—1888), s. 53, ГСТ, лист № 7, «Вилайеты: Хекяри и Ван»:

³⁴ Տարեգրքերում՝ Bērvār-i-yī-lāiā և Bērvār-i-yī-zēr: Քրդերեն՝ Barvār-i-zōr և Barvār-i-zēr: Քրդական ցեղեր էին:

(գ-խումբը՝ Սորաթավան, քրդ. ցեղ)³⁵, Մահմուդի (գ-խմբերը՝ Խոշաբ, Քա-կուրի, Մուկուրի, Շամսուրի, Միլան, Եզդի, վերջին 5-ը՝ քրդ. ցեղեր), Շիվի-լան կամ Շիվիլե (քրդ. ցեղ):

1888 թ. կատարվեցին նոր փոփոխություններ: Սկզբում, Կարճկանր՝ Կեցանի հետ, վերադարձվեց Վանին, իսկ այնուհետև վերջինիս միացվեց նաև (այս անգամ ընդմիջտ) ամբողջ Հաքյարիի նահանգը³⁶, Այսպիսով, կրկին վերականգնվեց մեկ միասնական նահանգ, բաղկացած 2 գավառակներից՝ Վան և Հաքյարի: Ընդ որում, առաջինն ուներ 8, իսկ երկրորդը՝ 11 գավառակ³⁷: 1888 թ. սահմաններում Վանի նահանգն ուներ 47.700 կմ² տարածու-թյուն, բրից 22.700 կմ²-ը բաժին էր հասնում համանուն գավառին, իսկ 25.000 կմ²-ը՝ Հաքյարիին³⁸, Նշենք, որ մինչև 1893 թ. վերջինիս կազմում էր Ամադիեն, որն այդ թվին ընդմիջտ անցավ Մոսուլին: 1888—1896 թթ. Վանի նահանգի ներքին վարչական կառուցվածքն ուներ մի հետաքրքիր առանձնահատկություն. խիստ ավելացված էին գյուղախմբերը, ըստ երևույթին տեղերում կառավարումը դյուրին դարձնելու նպատակով: Վանի գավառի գյուղախմբերի ճնշող մեծամասնությունը հայաբնակ էր: Հաքյարիում դրանք հիմնականում համապատասխանում էին որևէ քրդական, երբեմն՝ նաև ասորական ցեղի բնակության տարածքին (փաստորեն՝ յուրատեսակ ազգագավառակներ էին): Այդ գյուղախմբերի ցանկն ըստ գավառակների (1888—1891 թթ. վիճակով) ներկայացնում ենք հավելվածում, առանձին սյունակներում տալով դրանց հայերեն, ռուսերեն և թուրքերեն (արաբատառ, ճշտված) ձևերը³⁹:

Ինչպես տեսնում ենք, ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում (1878—1888), Վանի նահանգի վարչական բաժանումն ու սահմանները բազմիցս փոփոխություններ կրեցին: Նրա կազմից հանվեցին արևմտյան և հարավ-արևմտյան հայաշատ շրջանները (Մուշ, Բուլանջիս, Մանազկերտ, Խլաթ, Բիթլիս, Խիզան, Սպարկերտ), իսկ փոխարենը միացվեց Հաքյարին՝ զգալի թիվ կազմող քուրդ ազգաբնակչություններ: Նման վարչական նենգ քաղաքականու-թյունը, երբ հայաբնակ նահանգներին կամ գավառներին կցվում էին մեծա-

³⁵ Տարեգրքերում Շքյաֆթին և Շկակը հաճախ հանդիպում են որպես առանձին վարչա-միավորներ: Ըստ Վ. Մակսկու, դրանք նույն քրդական ցեղի տարբեր անուններն են (կոչվում էր նաև մազրիկի: МВВ, СДН, стр. 59): Ռ. Տերմենը շքյաֆթին հիշում է «Շկակ» ցեղամիավորման կազմում (ТОХ, стр. 230): Բացի այդ, 1881—1882 և 1883—1884 թթ. տարեգրքերում Շքյաֆթի գավառակի հետ միասին հիշված է նաև Շկակ և Շքյաֆթի (վերջինս աղավաղվելով՝ դարձել է سلفی, պետք է լինի شكفتی) գ-խումբը: Վերոհիշյալ փաստերից ելնելով,

նպատակահարմար ենք գտել գավառակի անունը տալ Շքյաֆթի-Շկակ ձևով: Սակայն կան տվյալներ, որ շքյաֆթին և շկակը նույն ցեղամիավորման ճյուղավորումներն էին (կարիչե-ները: ZKK, s. 391—392): Ինչ վերաբերում է Սորաթավան գ-խմբին, ապա նրա անունը բոլոր տարեգրքերում խիստ աղավաղված է: Ճշտել ենք ըստ ZKK աշխատության, որ փին-յանիչ մեծ ցեղի ճյուղավորումներից (կարիչեներից) մեկն այդպես է կոչվում (s. 392): Սա-կայն թուրք-իրանյան սահմանի մոտ գտնվում է Soratap փոքրիկ լեռնաշղթան (СКА 9, 38/44 А1): Հնարավոր է, որ գ-խումբը կոչվեր նաև այս անունով (թուրք. صور اتاب կամ

صور اطاب):

³⁶ KAT 8, стр. 143:

³⁷ SDO 1306 (1888—1889), s. 475—484: Ըստ Ա. Կոլլուրակիների, Վանի գավառն ուներ 9 գավառակ, որոնցից մեկը Նորդուզն էր (KAT 8, стр. 143): Իրականում վերջինս մինչև 1891 թ. եղել է Հաքյարիի կազմում:

³⁸ СТА 2, p. 688, 716:

³⁹ Օգտվել ենք հետևյալ տարեգրքերից՝ SDO 1306 (1888—1889), s. 475—484, SDO 1307 (1889—1890), s. 668—680, SDO 1308 (1890—1891), s. 660—672, SDO 1309 (1891—1892), s. 688—698, SDO 1310 (1892—1893), s. 696—706, SDO 1311 (1893—1894), s. 732—741, SDO 1312 (1894—1895), s. 750—759, SDO 1313 (1895—1896), s. 784—794, SDO 1314 (1896—1897), s. 794—804, 1890—1891 թթ. տարեգրքի տվյալները, միայն էլ ավելի աղավաղված, կան նաև СТА 2 աշխատությունում (p. 689, 717):

թիվ մահմեդական բնակչությանը շրջաններ, հետևողականորեն կիրառվում էր ողջ Արևմտյան Հայաստանում: Դրա հիմնական նպատակն այնպիսի վարչամիավորների ստեղծումն էր, ուր հայերը չկազմեին մեծամասնություն: Իսկ պատճառը 1878 թվականից «հայկական հարցի» քաղաքական ասպարեզ իջնելն էր, որի դրական լուծմանը թուրքական կառավարությունը դիմադրում էր կատաղի կերպով: Դրան էր գումարվում նաև արևմտահայկական նահանգների հայ ազգաբնակչության իրական թվաքանակի միտումնավոր կեղծումը, իսկ մի փոքր ուշ որդեգրվեց ցեղասպանության զարհուրելի քաղաքականությունը: Ուստի բնական է, որ այնպիսի հայաշատ կենտրոն, ինչպիսին էր Վանը, չէր կարող վրիպել թուրքական կառավարության ուշադրությունից, որտեղից էլ նման արագ փոփոխությունները: Նույն նպատակն էին հետապնդում նաև հետագա, արդեն ներքին վարչական ձևափոխումները:

1891 թ. որոշ գավառակներ վերածվեցին գյուղախմբերի: Ընդ որում, Հաբյարիից Վանին անցավ քրդաշատ Նորդուզը (Շատախի կազմում): Գյուղախումբ դարձան նաև Չալը (միացվեց Ջուլամերկին) և Օրամարը (Գավառում)⁴⁰: 1893 թ., ինչպես արդեն վերը նշեցինք, Մոսուլին տրվեց Ամադիեն⁴¹: Վանի նահանգի տարածությունը դարձավ 39.300 կմ²⁴²: Հյուսիսից նրան սահմանակից էին էրզրումի, արևմուտքից՝ Բիթլիսի, հարավից՝ Դիարբեքրի և Մոսուլի նահանգները, իսկ արևելքից՝ Պարսկաստանը: Այս սահմաններն էլ պահպանվեցին մինչև 1915 թ.: Ինչ վերաբերում է ներքին վարչական բաժանմանը, ապա այն հետագա տարիներին դեռ որոշ փոփոխություններ կրեց: Այսպես, 1897 թ. գյուղախմբերը կրկին պակասեցվեցին: Համաձայն Վանի 1897—1898 թթ. (Հ. 1314) տարեգրքի, գյուղախմբեր ունեին միայն հետևյալ գավառակները՝ Վանը (Վան-Տոսպ կամ թուրք.՝ Մերքեզ-նահիե, Հայոց-ձոր, Արճակ, Թիմար), Գյավաշը (Կարկառ), Շատախը (Նորդուզ), Ջուլամերկը (Չալ), Աղբակը (Շքյաֆթի), Գավառը (Օրամար, Բաժերգյահ), Շամդինանը (Կյարդի և Հարքի)⁴³: Այնուհետև, Ջուլամերկին միացվեց Մեծ Զաբ գետի ամբողջ ձախափնյակը, այսպես կոչված, «Ինքնավար ասորիների մարզը», կազմված Բազ, Դեզ, Թիար (Վերին և Ներքին), Թխում, Ջիլու (Վերին և Ներքին) գավառակներից⁴⁴, իսկ Վանի գավառին անցավ քրդաշատ Մահմուդին (Մահմուդիեն)⁴⁵: Վերջապես, Հաբյարիի կենտրոնը, որը դարերով եղել էր Ջուլամերկը, տեղափոխվեց Բաշկալե⁴⁶: 1898—1902 թթ. Վանի նահանգի 2 գավառները հետևյալ տեսքն ունեին⁴⁷.

I Վանի գավառ: Գավառակները՝ Վան (գ-խմբերը՝ Վան-Տոսպ, Հայոց-ձոր, Արճակ, Թիմար), Բերկրի, Արճեշ, Արժկե (Ադիլչևազ), Գյավաշ (գ-խումբը՝ Կարկառ), Կարճկան, Շատախ (գ-խումբը՝ Նորդուզ), Մոկս, Մահմուդի (գ-խումբը՝ Կարասու կամ Եզդի):

II Հաբյարիի գավառ: Գավառակները՝ Աղբակ (գ-խումբը՝ Շքյաֆթի), Խոշաբ (Մահմուրեթ-ուլ-Համիդ կամ Համիդի), Գավառ (գ-խումբը՝ Օրամար),

⁴⁰ SDO 1309, ն. տ.: Տե՛ս նաև SDO 1310—SDO1314:

⁴¹ SDO 1311, s. 534:

⁴² ՕՓՀ 1900, էջ 297: ՎՔԷ, էջ 6:

⁴³ MBB, стр. 3—4:

⁴⁴ MBB, СДН, стр. 67, ԱՀ 24, էջ 181:

⁴⁵ MBB, стр. 3:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ MBB, ГО, стр. 11—12; CO, стр. 199—201, СДН, стр. 5—85, ՕՓՀ 1903, էջ 189: Մահմուդիի և Աղբակի գ-խմբերը Վ. Մասկու մոտ բացակայում են: Տվել ենք ըստ XX դ. սկզբի տարեգրքերի տվյալների:

Ջուլամերկ («Ինքնավար ասորիների մարզի» հետ)⁴⁸, Բեյթ-ուլ-Շարաբ, Շամ-դինան (գ-խումբը՝ Գյարդի և Հարթի):

1902 թ. Վանի գավառակի գյուղատնտեսության դարձավ նաև Բերկրին, Մոկսը միացվեց Շատախին, իսկ Կարճկանը՝ Գյավաշին⁴⁹: Մեկ տարի անց վերջինիս անցավ նաև Մոկսը, իսկ Բեյթ-ուլ-Շարաբը վերածվեց գյուղատնտեսության կազմում: Այսպիսով, 1903—1914 թթ. Վանի նահանգի վարչական բաժանումը հետևյալն էր⁵⁰.

I Վանի գավառ: Գավառակները՝ Վան (գ-խմբերը՝ Վան-Տոսպ, Հայոց-ձոր, Արճակ, Թիմար, Բերկրի), Արճեշ, Արծկե (Ադիլչեկազ), Գյավաշ (գ-խումբերը՝ Կարկառ, Կարճկան, Մոկս), Շատախ (գ-խումբը՝ Նորդուզ), Մահմուդի (գ-խումբը՝ Կարասու կամ Եզդի):

II Հաֆյարիի գավառ: Գավառակները՝ Աղբակ (գ-խումբը՝ Շքյաֆթի), Ջուլամերկ (գ-խումբը՝ Բեյթ-ուլ-Շարաբ կամ Լեին), Գավառ (գ-խումբերը՝ Օրամար, Բաժերգյահ), Շամդինան (գ-խումբը՝ Գյարդի և Հարթի), Խոշաբ կամ Մամուրեթ-ուլ-Համիդ⁵¹:

XIX դ. վերջին—XX դ. սկզբին Վանի նահանգն ուներ խայտարեկ ազգային կազմ: Հայերից բացի, այստեղ բնակվում էին քրդեր, ասորիներ, թուրքեր, հրեաներ, գնչուներ, կովկասցիներ կամ «չերքեզներ»: Սակայն երբ խոսք է գնում նրա բնակչության թվաքանակի մասին, ի հայտ են գալիս լուրջ դժվարություններ: Խնդիրն ավելի է բարդանում, երբ փորձում ենք որոշել տարբեր ազգությունների, և հատկապես՝ հայերի թվաքանակը: Դա գալիս է աղբյուրների թերի, շատ դժվարում՝ հակասական և կեղծ տվյալներից: Դրանք մանրամասն այստեղ չենք թվարկի (կարևորները տալիս ենք տողատակում ժամանակագրական կարգով)⁵²: Նշենք միայն, որ աղբյուրները կարելի է բաժանել 2 խմբի՝ ա) աղբյուրներ, համաձայն որոնց նահանգում մեծամասնություն էին կազմում քրիստոնյաները, առաջին հերթին՝ հայերը: բ) Աղբյուրներ, ուր ուռճացված է մահմեդականների, հիմնականում՝ քրդերի թվաքանակը:

Սույն հոդվածով ընթերցողին ենք ներկայացնում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1912—1913 թթ.) Վանի նահանգի բնակչության վերաբերյալ մեր կատարած հաշվումները: Վանի գավառի համար, որոշ ուղղումներով, օգտագործել ենք Կ. Պոլսի պատրիարքարանի 1912 թ. տվյալները: Փանի որ Հաֆյարին որպես սակավաթիվ հայություն ունեցող շրջան, պատրիարքարանը չէր ընդգրկել հայաբնակ նահանգների կազմում, որի պատճառով մանրամասն տեղեկություններ 1912 թ. նրա բնակչության թվի և ազգային կազմի վերաբերյալ բացակայում են, մեր հաշվումները կա-

⁴⁸ Վ. Մակևին Ջուլամերկի կազմում նշում է Բարվարիզոր և Բարվարիութ գյուղատնտեսությունները (МББ, СДН, стр. 68—69):

⁴⁹ ՄՎՆ 3, էջ 42—43:

⁵⁰ SDO 1321 (1903—1904), s. 726—730, SDO 1322 (1904—1905), s. 740—744, SDO 1323 (1905—1906), s. 812—816, SDO 1324 (1906—1907), s. 876—880, SDO 1325 (1907—1908), s. 872—876, SDO 1326 (1908), s. 757—761, SDO 1327 (1909), s. 798—803, Տե՛ս նաև ՕՓՀ 1904, էջ 228; ՕՓՀ 1905, էջ 164:

⁵¹ Ստորև բերում ենք Ռ. Տերմենի տվյալները 1906 թ. Հաֆյարիի գավառների վերաբերյալ, որոնք զգալիորեն տարբերվում են տարեգրքերի հաղորդածից. Համիդի (Խոշաբ), Նորդուզ, Աղբակ, Ջուլամերկ, Գավառ, Շամդինան (որի ենթակայության տակ էր դրված Բեյթ-ուլ-Շարաբը, ТОХ, стр. 1):

⁵² SDO 1294 (1877), s. 482, SDO 1295 (1878), s. 385, ՎՎՆ, ՍՅ—9/III, T 6, p. 125, 127, 130, 147—148, 158, ГСТ, лист № 7, СТА 2, p. 631—760, ЗСК, ЛА 2, стр. 531, T 1, p. 39—40, 123, T 8, p. 98—100, МББ, ՄՎՆ 3—4, ՎՔԷ, էջ 9—78, ՄԴՎ, էջ 11—30, LQA, p. 59—61, АСА, МММ, p. 109—112: КОР:

տարել ենք Թուրքիայի 1927 թ. մարդահամարի հիման վրա՝ հետադարձ ուսումնասիրություն⁵³: 1927 թ. Հաքյարին առանձին նահանգ էր (վիլայեթ)՝ հիմնականում նախկին համանուն գավառի սահմաններում: Միայն Աղբակն ու Խոշարը մտնում էին Վանի նահանգի մեջ, ուստի նրանց բնակչությունը հաշվել ենք Հաքյարիի վրա: Բացի այդ, 1926 թ. Հաքյարիի հարավից Իրաքին էր անցել 2.200 կմ² տարածություն մի շրջան: Նախկին Հաքյարիի տարածքի 1927 թ. ազգաբնակչության թվաքանակը որոշելիս նկատի ենք ունեցել նաև այս հանգամանքը: Գործը հեշտացնելու համար տալիս ենք բնակչության մոտավոր թիվը:

Համաձայն Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալների, 1912 թ. Վանի գավառն ուներ 350.000 բնակիչ, որից հայեր՝ 185.000 (53 %)՝⁵⁴, քրդեր՝ 97.000 (32.000-ը՝ նստակյաց, 40.000-ը՝ քոչվոր, 25.000-ը՝ եզդի, 27 %), թուրքեր՝ 47.000 (13 %), ասորիներ՝ 18.000 (5 %), գնչուներ՝ 3.000 (2 %): Սակայն սրանցից ոմանց պետք է քննադատաբար մոտենալ: Այսպես, խիստ ուռճացված է եզդիների, ասորիների և գնչուների թվաքանակը: Առաջինները բնակվում էին Սարայ գյուղաքաղաքի շրջակա 10, ինչպես նաև Բերկրու, Արճակի ու Թիմարի որոշ գյուղերում, և տվյալ ժամանակաշրջանում նրանց թիվը մոտ 5.000 էր: Ասորիները Վանի գավառում խիստ սակավաթիվ էին: Նրանք մեծամասնություն էին կազմում Սարայ գյուղաքաղաքում (Մահմուդիի կենտրոնը, ավելի քան 100 ընտանիք), սակայն բուն գավառակում ասորաբնակ էր միայն մեկ գյուղ՝ Խարաբասորիկը: Ասորիները սփռված բնակվում էին նաև Նորդուզի, Շատախի, Հայոց-ձորի, Արճակի և Թիմարի հատուկենտ գյուղերում: Վերջապես, գնչուներ կային միայն Վան քաղաքում (Փշով-Փողան մասում) և մի քանի ընտանիք էլ՝ Մոկս գյուղաքաղաքի երկու թաղերում: Նրանց թիվը չէր անցնում 500-ից: Ավելացված է նաև թուրքերի թվաքանակը: Զանազան տվյալների համեմատումը ցույց է տալիս, որ ամբողջ Վանի նահանգում թուրքերն այս ժամանակ ընդամենը 30—31.000 էին, որից 15.000-ը՝ միայն Վան քաղաքում (հայերը՝ 30.000): Նրանք բնակվում էին նաև Ականց ու Արծկե փոքրիկ քաղաքներում, Վան-Տոսպի, Թիմարի և Արճեշի մի շարք գյուղերում: Վանի գավառում ապրում էին նաև կովկասյան լեռնականներ, որոնք այստեղ հաստատվել էին 1860—1870-ական թթ.: Թեև թուրքերը նրանց կոչում էին հավաքական «չերքեզ» անունով, դրանք տարբեր ազգությունների ներկայացուցիչներ էին, հիմնականում՝ օսեր, կային նաև արխազներ և աղըղեններ: Կովկասցիները բնակվում էին Արծկե-Աղիլջևազի, Թիմարի և Արճակի մի քանի գյուղերում: Ըստ երևույթին, իրենց սակավաթվության պատճառով (ամբողջ նահանգում՝ մոտ 500 հոգի) պատրիարքարանի մարդահամարում նրանք հաշվի չէին առնված: Այսպիսով, անփոփոխ թողնելով հայերի թիվը և նկատի ունենալով վերոհիշյալ ճշտումները, 1912 թ. Վանի գավառի ազգային կազմի համար կստանանք հետևյալ պատկերը.

Հայեր	185.000 (61,7 %)	
Քրդեր (եզդիների հետ)	մոտ 80.000 (26,6 %)	
Թուրքեր	30.000 (10 %)	
Ասորիներ	1.000	} 1,7 %
Կովկասցիներ	500	
Գնչուներ	500	
Ընդամենը՝	300.000 (100 %)	

⁵³ Վերցրել ենք 3BA (стр. 277, 280) գրքից: Օգտվել ենք նաև հետևյալ թուրքական աղբյուրներից. TCS, թ. 840, 1150—1153, TCA, թ. 102—104: Պատրիարքարանի մարդահամարի տվյալները վերցրել ենք LQA աշխատությունից (р. 60—61):

⁵⁴ Տոկոսային հարաբերությունն ինքներս ենք հաշվել:

Ինչպես արդեն նշել ենք, Հաքյարիի 1912 թ. բնակչությունը որոշել ենք հետադարձ ուսումնասիրություն կատարելով, որը հիմնված է Թուրքիայի 1927 թ. մարդահամարի տվյալների վրա: Նախկին գավառն այդ ժամանակ տրոհված էր հետևյալ 3 մասերի.

1) Բուն Հաքյարիի նահանգ, բաղկացած Բեյթ-ուլ-Շաբաբ, Հաքյարի (Ջուլամերկ), Գավառ (Գյավառ) և Շամդինան գավառակներից (կազաներից): Ուներ 25.000 բնակիչ, որից քրդեր՝ 17.000, թուրքեր (ավելի ճիշտ՝ թուրքերեն խոսողներ)⁵⁵ 1.000, այլք (լեզուն չնշված)՝ 7.000: Կարծում ենք, որ վերջիններս լեռնային շրջաններում դեռ բնակվող ասորիներն էին:

2) Վանի նահանգին անցած Աղբակը (Բաշկալեն) և Խոշաբը: Առաջինի բնակչությունը 5.200 էր, հիմնականում՝ քրդեր: Նախքան առաջին համաշխարհային պատերազմն այստեղ բնակվում էին նաև մեծաթիվ հայեր, ասորիներ և հրեաներ (Բաշկալե գյուղաքաղաքում): 1927 թ. Աղբակում հայեր և ասորիներ այլևս չկային, սակայն թուրքական մարդահամարի տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ որոշ քանակությամբ հրեաներ դեռ մնացել էին (մոտ 200 հոգի): Խոշաբը որպես գյուղախումբ (նահիե) մտնում էր Վանի գավառակի մեջ, և տեղեկություններ նրա բնակչության վերաբերյալ ձեռքի տակ չունենալով, ենթադրաբար թվաքանակն ընդունել ենք 5.000, բոլորն էլ՝ քուրդ: Այսպիսով, 1927 թ. Աղբակն ու Խոշաբը միասին ունեին շուրջ 10.000 քուրդ և 200 հրեա բնակիչ:

3) 1926 թ. Իրաքին անցած 2.200 կմ² տարածությամբ շրջանը: Ելնելով բնակչիմայական պայմանների նմանությունից, վերջինիս համար ևս ընդունել ենք Հաքյարիի կազմում մնացած գավառակների բնակչության միջին խտությունը՝ 1 կմ²-ի վրա 1,6 մարդ: Դրանից եզրակացնում ենք, որ 1927 թ. այստեղ բնակվում էր շուրջ 4.000 մարդ, բոլորն էլ՝ քուրդ:

Ի մի բերելով այս տվյալները, տեսնում ենք, որ 1927 թ. նախկին Հաքյարիի տարածքում բնակչության թիվը շուրջ 39.200 էր, որից քրդեր՝ 31.000 (79 %), ասորիներ՝ 7.000 (18 %), թուրքեր՝ 1.000 (2,5 %), հրեաներ՝ 200 (0,5 %): Պարզ երևում է, որ պատերազմի և նրան հաջորդած տարիների ընթացքում Հաքյարիի բնակչության թիվը զգալիորեն կրճատվել էր: Փոխվել էր նաև ազգային կազմը: Հատկապես ծանր կորուստներ էին կրել քրիստոնյա ազգությունները՝ հայերն ու ասորիները: Հայերը բնակվում էին Աղբակի, Խոշաբի, Ջուլամերկի և Գավառի 6 տասնյակից ավելի գյուղերում: Որոշ տրվյալներով, XIX դ. 80-ական թթ. նրանց թիվը 35—40.000 էր: Սակայն պարբերաբար կրկնվող կոտորածների և գաղթի հետևանքով 1912 թ. այն նվազել էր՝ հասնելով 15.000-ի: Այնուամենայնիվ, որոշ շրջաններում հայերը դեռ շարունակում էին կազմել մեծամասնություն (Աղբակի և Խոշաբի որոշ մասերում, Դիզա գյուղաքաղաքում): Այնինչ, 1927 թ. նախկին Հաքյարիի տարածքում ոչ մի հայ այլևս չէր մնացել: Գավառում կար հոծ ասորական բնակչություն: Աղբյուրների հիմնական մասն ամբողջ Վանի նահանգում ասորիների թիվը սահմանում է 80.000 (մի քանիսը՝ 90.000, և նույնիսկ՝ 100.000): Ինչպես արդեն նշել ենք, Վանի գավառի ասորիներն ընդամենը 4.000 էին: Հետևաբար ասորի բնակչության 95 %-ը (շուրջ 76.000 մարդ) ապրում էր Հաքյարիում: Ընդ որում, «Ինքնավար ասորիների մարզում» նրանք կազմում էին բնակչության 95 %-ը (ավելի քան 50.000 մարդ, Վանի նահանգում ամենախիտ բնակեցված տարածքը): Մնացած մասը բնակվում էր Խոշաբի⁵⁶, Աղբակի, Ջուլամերկի, Բեյթ-ուլ-Շաբաբի, Գավառի և Շամդինանի

⁵⁵ Մարդահամարը լեզվական հատկանիշի հիման վրա էր արված:

⁵⁶ Խոշաբում ասորաբնակ էր միայն Սեկ (Սիլ) գյուղը:

բազմաթիվ գյուղերում: Թուրքական մարդահամարի համաձայն, Հաքյարիի երբեմնի բազմահազարանոց ասորի բնակչությունից 1927 թ. մնացել էր ընդամենը 7.000 մարդ (եթե, իրոք, դրանք ասորիներ էին), այսինքն՝ ավելի քան 90 %-ը կոտորվել կամ հեռացել էր: Անդրադառնալով քրդերին, նշենք, որ նրանց թիվը որպես կանոն ուռճացվել է: Սակայն 1927 թ. մարդահամարի տվյալները, որքան էլ դրանք թերի լինեն, ցույց են տալիս, որ Հաքյարիում նրանք այնքան էլ մեծաթիվ չէին, համենայն դեպս զիջում էին ասորիներին: Եթե մինչև 1927 թ. քրդերի կրած կորուստներն ընդունենք 20.000 (վերաբնակեցումների, բարձր մահացության, թուրքական իշխանությունների հետապնդումների հետևանքը), ապա կարող ենք եզրակացնել, որ 1912 թ. նրանց թիվը՝ փոքր քանակությամբ թուրքերի հետ միասին, ընդամենը 52.000 էր: Հրեա բնակչություն կար Բաշկալե գյուղաքաղաքում (տարբեր տվյալներով՝ 150—180 ընտանիք) և Շամդինանի կենտրոն Նեհրի ավանում (50 ընտանիք): Ուրեմն, 1912 թ. հրեաների թիվը պետք է կազմեր շուրջ 1.500 մարդ: Այսպիսով, Հաքյարիի ազգաբնակչության համար ստանում ենք հետևյալ տվյալները.

Հայեր	15.000 (10,3 %)
Ասորիներ	76.000 (52,6 %)
Քրդեր (թուրքերի հետ)	52.000 (36,1 %)
Հրեաներ	1.500 (1 %)
Ընդամենը՝	144.500 (100 %)

Մեր հաշվումները ստորև ներկայացնում ենք հետևյալ աղյուսակով:

Ազգությունը	Վանի գավառ		Հաքյարիի գավառ		Ընդհանուրը	
	Թվաքանակը	%-ային հարաբ.	Թվաքանակը	%-ային հարաբ.	Թվաքանակը	%-ային հարաբ.
Հայեր	185.000	61,7	15.000	10,3	200.000	45
Քրդեր	80.000	26,6	51.000	35,2	131.000	29,5
Ասորիներ	4.000	1,3	76.000	52,6	80.000	18
Թուրքեր	30.000	10	1.000	0,9	31.000	7
Հրեաներ	—	—	1.500	1,0	1.500	} 0,5
Կովկասցիներ	500	} 0,4	—	—	500	
Գնչուներ	500		—	—	500	
Ընդամենը	300.000	100	144.500	100	444.500	100

Ինչպես տեսնում ենք, չնայած կոտորածներին և գաղթին, 1912 թ. հայերը դեռ շարունակում էին մնալ նահանգի ամենամեծաթիվ ազգությունը: Իրենց թվաքանակով երկրորդը քրդերն էին, այնուհետև՝ ասորիները: Ընդ որում, հայերն ասորիների հետ կազմում էին Վանի նահանգի ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը՝ 63 %-ը (280.000 մարդ): Այս առումով, հարևան Բիթլիսի նահանգի հետ, Վանն առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Արևմտյան Հայաստանում: Մյուս ազգությունները կազմում էին ընդամենը 7,5 %-ը:

2 % միջին բնական աճի դեպքում 1915 թ. (նախքան կոտորածները) Վանի նահանգի բնակչությունը՝ կազմելու էր շուրջ 476.000 մարդ, որից հայեր՝ 215.000, քրդեր՝ 140.000, ասորիներ՝ 85.000, թուրքեր՝ 33.000, հրեաներ, կովկասցիներ և գնչուներ՝ 3.000:

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳՅՈՒՂԱԽՄԲԵՐՆԸ 1888—1891 թթ.՝

Գավառակ	Չայերեն	Ուրերեն	Քուրերեն	Գավառակ	Չայերեն	Քուրերեն
Վան	Ազարյան, Ազարեն	Азарян, Азарен	هزاره الای	Քերկրի	Արաղա Աղրուլաղ Գոնդուրմա	Абага Агбулаг Гондурма, Гондурме
	Ալյուր	Алюр	اوراک		Գործոթ + Կվեցի, Կվիի Կեճան	Горцот Лвили
	Ավերակի	Авераки	اسکله		Ջիլի, Չիլի	Кечач, Кеджан Джили, Чили
	Ավանց	Аванц	ارچاک		Օսմանլու	Османлу
	Արճակ	Арчак	اروميد		Աղի	Ағи
	Արտամետ	Артамет	گلی	Արճեշ	Գանճակ	Гандзак
	Գյուլլու	Гёлло, Гёлло	شخنکوه		Չելեբիբաղ	Челебибаг
	Իշխանիբոմ	Ишхангом	قىزل طاش		Փիր-Օմար	Пир-Омар
	Կզլլիբաշ	Кзыллаш	قاسم اوفنو		Քոմար	Комар
	Կյոսենց	Кюсенец	مجنر سفنا		Քուզեր	Кузер
	Մալկասըմ, Նեթրին	Мжкерт Нижний	ملا قاسم		Աղթեթ	Агтепе
	Մալկասըմ, Մուլա-Կասըմ	Молла-Касым	شاہ بافی	Արճիկ (Աղիլուկ)	Արեն	Арен
	Նորդուլու	Норгог	شونلی		Բեշնագոմեր	Бешнагомер
	Շահբաղի	Шахбаги	جانیک		Դաշկուն	Дашкун
	+Շավեցի, Շավիլի	Шавли	سيوان		Նորշենջուղ	Норшенджуг
	Ջանիկ	Джаннк				
	Սևան	Севан				

1 + Նշանով ցույց են տրված քրդական և ասորական ցեղերը: Որոշ դեպքերում նշել ենք նաև քրդական անվանաձևերը: Օգտվելով աղբյուրից, խորին շնորհակալություն ենք հայտնում մեր գիտական զննվալար, պատմ. գիտ. թեմայի Բ. Հարությունյանին, պատմ. գիտ. դոկտոր Հ. Փափազյանին, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիայի գիտաշխատողներ, բան. գիտ. թեմայի գիտնականներ Գ. Ասատրյանին և Ա. Փղաղյանին, որոնց խորհուրդները և տրամադրած նյութերը մեծապես օգտակար եղան մեզ:

Գաղափար	Հայերեն	Ռուսերեն	Քուրդերեն	Գաղափար	Հայերեն	Ռուսերեն	Քուրդերեն
Վաղճվան	Ալան	Алан	الان	Խոջար (Մալ-Վաղճար-ուլ-Համիր, Հա-Վրդի)	Կարիկ	Касрик, Аджикисо	Բուրդերեն
	Գավառ	Гавар	گوار	Ազարակ	Ալի	Уры	Ագճա Վաճա Երվան
Մոկա	Գուզել-դեր, Դեր	Гузел-дере, Дера	دري، دره		+Հարթուշի, Արթուշի	Хартуши, Артуши	Խրոշի, Արտոշի
	Կեճան	Кежан	کسان		+Շիվելան, Շիվելի	Шивелан, Шивелэ	Շիվեհան, Շիվեհե
Շամախ	Փարթավ	Партав	پارته		+Շրլաֆթի, Շրլաֆթի	Шикфти, Шикфтан	Տիկֆտի, Տիկֆտան
	Նանենց	Наненц	نانس		Սարաթաթ	Саральбак, Серальбак	Մարաթաթ
Շարախ	Տալանի-ձոր	Талани-дзор	لان، دزان دزسی		+Արաթաթան	Соратаван	Տորաթաթան, Տորաթաթ
	Տինիս	Тинис	تینیس		—	—	—
Շարախ	Էձինան	Ездinan	ازیدیان		+Փենարթուշ, Քենարթուշ	Кенарбруж, Кенарбруш	Կենարթուշ, Կենարթուշ
	Կաճետ	Качет, Каджет	قاجد		+Քալաֆի, Քալաֆի	Кевжи, Кевзи	Կեվճի, Կեվճի
Քյալաշ	Շիրաշ	Шираш	شیراوش		+Ալան	Алан	Ալան
	Տևտիկն	Севтикнн	تختیانس		+Շիլան	Шидан	Շիլան
Քյալաշ	Վախրով	Вахров	پرخو		+Գավաթան	Гавдан	Գավան
	Գալմանց	Дахманц	قارغار		+Գովիան, Գովիան	Говнан, Гувнан	Գովան, Գովան
Մանճուրի (Մանճուրի)	Կարկառ	Каркар	قاركار		+Գուլի, Գուլիան	Гули, Гулиан	Գուլի, Գուլիան
	Նարեկ	Нарек	ناریک		+Փերիկ	Жерки	Ջերկի, Ջերկի
Քյալաշ	Նորդյուզ	Нордгюг	نوردج				
	Ուստան	Востан	وسطان				
Մանճուրի (Մանճուրի)	+Ծղի	Езды	یژیدی				
	+Փավուրի	Такурк	تقوری، تاقوی				
Մանճուրի (Մանճուրի)	+Միլան	Милан	میلان				
	+Մուկուրի	Мукурн	مقوری				
Մանճուրի (Մանճուրի)	+Շամաթի	Шамсыки	شمسیکی				

Յ. Ազարի (կամ Նրա թի մար) քրդերեն անվանումը, որ նշանակում է «Գլխավոր կամ Մեծ Ազարի» (Sê'm Rêdê 9, էջ 416):

Քաղաք	Հայերեն	Ռուսերեն	Քուրդերեն	Գաղաթափ	Հայերեն	Ռուսերեն	Քուրդերեն
Զալձ	+Մամբուրյան +Ալեքի +Փիրուսյան +Գեզճ +Բարուս, Բարուր +Հարթուշի, Արթուշի +Փինյանիշ +Բարվարի (Բարվարիուր, Բ և Ներթին Բի- ար (Բիարի))	Мамхуран Сынды, Сенды Пиросан Дез Тхум, Тхуб Хартуши, Артуши Пиньяниш Барвари (Бервари, Берварирут) и Нижний Тиар (Тиари) Левни (Ливин) и Верхний Тиар (Тиари) Сулахи (Селахи), Тал и Дер Белиджан Дери, Дир	مامخوران سندی پيروسان داده تغروب هروشي . ارزوشي پننيانش برواري (برواري روت) و طيار سغنا	Մամար Շամդիեան Ամարին (Ամարիյա)	էի, էլե +Մարուր Փիրուսյան՝ +Էշուսի, Էշուսիին +Ջիլու, Վերին և Ներթին +Գյարդի +Ջերգան +Խումար +Հարթի +Ներթին Բարվարի +Վերին Բարվարի Գառդին, Գառդիյա +Ներվա, Ներվե +Բերվան, Բախան	Эли, Эле Мальбуб Пирзалан Иштаз, Иштазин Джилу, Верхний и Нижний Гярды, Герды Зерзан Хумаро Харки, Херки Барвари Нижки. Барвари Верхи. Даудие, Даудия Нерва, Нерве Рыкан, Рақан	ایله مالبوب پيروسان اشتاژين جیلولر، جنولر علیا و سفلی گوردی، گوردین زرزان خومارو هرکی برواری زدر برواری بالا داودیه نروه ریگان، راکان
Չալաճ	+Արվարի և Ներթին Բի- ար (Բիարի) +Կեն (Կիլին) և Վերին Բիար (Բիարի) +Սուպահի (Սե- լահի), Քալ և Գեդ +Բելիջան Գերի, Գիրի	Супахи и Нижний Бийар (Бийар) Кен (Килин) и Верхний Бийар (Бийар) Супахи (Селахи), Кал и Гед Белиджан Гери, Гери	لوڤن و طيار علیا سلاحي، طال و ڊير بيليجان ڊيري				

3 Տարեգրքերում Չալի գյուղախմբերի շարքում եւ հիշվում են Վերին և Ներթին Բիարները։ Տվել ենք միայն Ջուլամների կազմում։

1. ԱԱԸ— Անասյան Հ. Ս., XVII դ. ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961:
2. ԱՀ 24— «Ազգագրական հանդես», գիրք 24, № 1, Քիֆլիս, 1913:
3. ԱՎ 12— «Արժուի Վասպուրական», Վարազ, 1853, № 12:
4. ԱՐ 1883— «Արձագանք», Քիֆլիս, 1883, № 13:
5. ԽԱ 2— «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատոր Բ, Ե., 1964:
6. ԽԱ 3— «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատոր Բ, Ե., 1964:
7. ԻնՀ— Ինճիբյան Ղ., Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, մասն Ա, հատոր Ա, Վենետիկ— Ս. Ղազար, 1806:
8. ՄԱ— «Մշոյ աշխարհ», «Լումայ», Քիֆլիս, 1897, գիրք Ա:
9. ՄՎՆ 3—4— Մերուկ, Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ», Քիֆլիս, 1904, № № 3—4:
10. ՄՕՀ— «Մրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի», Կ. Պոլիս, 1878:
11. ՄԻՎ— Ա—Դո, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914—1915 թւականներին, Ե., 1917:
12. ՄՆՈՒ 1— Միրախոջյան Մ., նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ. Պոլիս, 1884:
13. ՍՕԿ— Սաֆրաստյան Ա. Խ., Օսմանյան կայսրութեան վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), «Արևելագիտական ժողովածու», հատոր 1, Ե., 1960:
14. ՍՏ—9/111— ՀՍՍՀ Գրականութեան և արվեստի թանգարան, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, գործ 9/111:
15. ՎԲԷ— Ա—Դո, Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայէթները, Ե., 1912:
16. ՎՎՆ— ՀՍՍՀ Գրականութեան և արվեստի թանգարան, Բ. Ազատյանի ֆոնդ, գործ 57/111. «Վիճակագիր Վանի նահանգի» (1878 թ.):
17. ԻժԺ 8— Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 8, Ե., 1957:
18. ՍՓՀ 1900, 1903—1905— «Ընդարձակ օրացոյց Սուրբ Փրկչեան հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1900, 1903—1905:
19. АСА—Аракелян А. А., Статистика армянского населения в Малой Азии, Тифлис, 1914.
20. ГСТ—Гиппиус А. П. Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью, Тифлис, 1889.
21. ЕТА—Ерицов А. Д., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.
22. ЗВА—Завриев Д. С., Восточная Анатолия. Экономические очерки. «Закавказская торговая палата», Тифлис, 1936.
23. ЗСК—Зелёный и Сысоев, Карта распределения армянского населения в Турецкой Армении и Курдистане, Тифлис, 1896.
24. ИКО 2—II—«Известия Кавказского отдела императорского Русского географического общества», том 2, «Приложения». Тифлис, 1873.
25. ИКО 6—II—«Известия кавказского отдела императорского Русского географического общества», том 6, «Приложения», Тифлис, 1879—1881.
26. КАТ 8—Коллбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 8, часть 2, Тифлис, 1890.
27. ЛА 2—Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки и этюды, том 2. Тифлис, 1910.
28. МВБ—Маевский В. Т., Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Тифлис, 1904. СДН—«Статистические данные о населении». ГО—«Географический очерк». СО—«Статистический очерк».
29. МВВ—Маевский В. Т., Ванский вилайет. Военно-статистическое описание, Тифлис, 1901.
30. МЭВ—Малама Я. Д. Описание Эрзерумского вилайета. С. Петербург, 1874.
31. ТОИ—«Аграрный строй османской империи XV—XVI вв.» Документы и материалы Составление, перевод и комментарии А. С. Тверитиновой, Москва, 1963.
32. ТОХ—Термен Р. И., Отчет о поездке в санджак Хеккиари Ванского вилайета в 1906 году, Тифлис, 1910.

33. АСН—Хуршуд-эфенди, Сияхэт-намэ-и-худуд. Описание путешествия по турецко-персидской границе, С. Петербург, 1877.

34. ШХБ—Шараф-хан Бидлиси, Шараф-намэ, том I, Москва, 1967.

35. ВОI—„Belleleten“. Türk Tarih Kurumu, с. XY, s. 60, Ankara, 1951.

36. SDO և համապատասխան բվականք. سالنامه دولت عليه عثمانیه، استانبول. *Օգտագործել ենք 1848—1849 (շ. 1265), 1849—1850 (շ. 1266), 1851—1852 (շ. 1268), 1865—1866 (շ. 1282), 1866—1867 (շ. 1283), 1867—1868 (շ. 1284), 1868—1869 (շ. 1285), 1870—1871 (շ. 1287), 1871—1872 (շ. 1288), 1872—1873 (շ. 1289), 1873—1874 (շ. 1290), 1874—1875 (շ. 1291), 1875 (շ. 1292), 1876 (շ. 1293), 1877 (շ. 1294), 1878 (շ. 1295), 1878—1879 (շ. 1296), 1879—1880 (շ. 1297), 1880—1881 (շ. 1298), 1881—1882 (շ. 1299), 1882—1883 (շ. 1300), 1883—1884 (շ. 1301), 1884—1885 (շ. 1302), 1885—1886 (շ. 1303), 1886—1887 (շ. 1304), 1887—1888 (շ. 1305), 1888—1889 (շ. 1306), 1889—1890 (շ. 1307), 1890—1891 (շ. 1308), 1891—1892 (շ. 1309), 1892—1893 (շ. 1310), 1893—1894 (շ. 1311), 1894—1895 (շ. 1312), 1895—1896 (շ. 1313), 1896—1897 (շ. 1314), 1903—1904 (շ. 1321), 1904—1905 (շ. 1322), 1905—1906 (շ. 1323), 1906—1907 (շ. 1324), 1907—1908 (շ. 1325), 1908 (շ. 1326), 1909 (շ. 1327) Թվականների տարեգրքերը:*

37. SVE—(1871—1872) ۱۲۸۸ سالنامه ولایت ارضروم

38. TCA—۱۹۲۸ تورکیه جمهوریتی اطلسی، استانبول

39. TCS—۱۹۲۷-۱۹۲۶ تورکیه جمهوریتی دولت سالنامهسی، استانبول

40. KOP—Karpal K. H., Ottoman Population. 1830—1914. Demographic and Social Characteristics. Madison, Wisconsin, 1983.

41. MMM—McCarthy J., Muslims and Minorities, New York, 1983.

42. PHG—Pitcher D. E., An Historical Geography of the Ottoman Empire, London, 1981.

43. T 6—Turkey, no. 6(1881), London, 1881.

44. T 1—Turkey, no. 1(1890—1891), London, 1891.

45. T 8—Turkey, no. 8(1896), London, 1896.

46. STA 2—Cuiquet V., La Turquie d'Asie, tome 2, Paris, 1892.

47. LQA—Léart M., La question arménienne à la lumière des documents, Paris, 1913

48. BOP—Birken A., Die Provinzen des osmanischen Reichs, Wiesbaden, 1976.

49. SKA 9—„Codex Kultur Atlas. Türkei“, Teil 9, Gundholzen, 1966.

50. ZKK—محمود زكي أمين، جلاصة تاريخ الكرد و كردستان لبنان، ۱۹۸۳

Г. М. БАДАЛЯН—Ванский вилайет в период с 1840-х по 1914 гг. (административно-политическое и демографическое исследование). Статья посвящена одному из крупных западноармянских вилайетов (губерний)—Ванскому вилайету, который входил в состав Османской империи. На основе различных источников (в том числе официальных турецких ежегодников—«Сальнамэ») автором дано подробное описание административно-политического деления Ванского вилайета с 1840-х гг. до 1914 г. Показано, какие политические цели преследовало султанское правительство, многократно менявшее административную структуру вилайета. Исследованы также демографическая ситуация и этнический состав населения Ванского вилайета накануне первой мировой войны. Выяснено, что несмотря на систематические погромы и связанную с ними эмиграцию, армяне оставались наиболее многочисленной этнической группой Ванского вилайета (из 444 500—200 000 или 45%). Причем, в северной части вилайета (Ванский санджак) они составляли абсолютное большинство (61,7%). В южной части вилайета (Хаккярский санджак) большинство составляли ассирийцы (айсоры, 52,6%). Таким образом, накануне первой мировой войны в Ванском вилайете преобладало христианское население (280 000 чел. или 63%).